Ուղեցույց

Մայրենի /Ընթերցանություն/ առարկայի մարզային օլիմպիադայի ստուգման

1. Օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցների կատարած աշխատանքները ստուգում է մարզի կողմից ձևավորված «Հայոց լեզու և գրականություն» առարկաների հանձնաժողովը:

2. Մարզային փուլերի աշխատանքները ստուգող հանձնաժողովն սկսում է ժամը 15:00-ից: Բողոքարկումը կատարել օլիմպիադայի հաջորդ օրը, ժամը 15:00-16:00:

3. Յուրաքանչյուր դասարանի առաջադրանքը գնահատվում է 100 միավորանոց սանդղակով /յուրաքանչյուր հարցի պատասխանն առավելագույնը գնահատվում է 5 միավոր/:

4. Սխալ պատասխանի համար միավոր չի տրվում:

5. Ուղղագրական և կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր:

6. Առավելագույն միավորը տրվում է, եթե՝

ա/ հարցին տրված է տրամաբանված, հարուստ բառապաշարով պատասխան՝ հարազատ մնալով գրվածքի բովանդակությանը,

բ/ կատարվել է ճիշտ բառընտրություն, նախադասությունների ճիշտ և համոզիչ ձևակերպում,

գ/ տրվել են ինքնատիպ բառապաշարով ու լուծումներով պատասխաններ:

7. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի /Երևանի քաղաքապետարանի/ վարչությունը օլիմպիադայի արդյունքները Excel ֆայլով չորս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան